ԿԱՐԾԻՔ

ԱՐՏԱԿ ԼԵՎԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ <<ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ)>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՃՅՈՒՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական տնտեսության պայմաններում արդյունաբերական կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման հիմնահարցերը ձեռք են բերում մեծ կարևորություն: Դա, նախ և առաջ, վերաբերում է գործունեության համար բարենպաստ միջավայրի և անհրաժեշտ նախադրյալների ձևավորմանը: Այս առումով, արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովումը դրանց զարգացման, մրցակցային առավելությունների ձեռք բերման և հնարավոր մարտահրավերներին դիմագրավման հիմնական պայմաններից է: Ըստ էության, այն ցույց է տալիս արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում կազմակերպության բնականոն գործունեության իրականացման կարողությունը: Ակնհայտորեն, կազմակերպության կայունությունը հանդես է գալիս նաև որպես զարգացման գրավական, ինչը ենթադրում է այդ ուղղությամբ որոշակի քայլերի և ծրագրերի իրականացում՝ այդ թվում նաև համապատասխան պետական քաղաքականության իրականացման առումով:

Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են այդ հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը***:

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել

առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ***ներածական*** մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Կազմակերպությունների կայունության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում*** քննարկվել են կազմակերպությունների կայունության հիմնահարցերը և դրա ապահովման խնդիրները, բացահայտվել են արդյունաբերական կազմակերպությունների կայունության վրա ազդող գործոնները և ուսումնասիրվել են արդյունաբերական կազմակերպությունների կայունության գնահատման մեթոդները:

Աշխատանքի ***երկրորդ՝ «Արդյունաբերական կազմակերպությունների կայունության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» գլխում*** վերլուծվել է Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների կայունության մակարդակը և հիմնավորվել է պետության դերը արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովման գործում:

Ատենախոսության ***երրորդ՝ «Արդյունաբերական կազմակերպությունների կայունության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»*** գլխում ներկայացվել են պետություն-մասնավոր գործընկերության բարելավման հնարավոր ուղղությունները, մշակվել են արդյունաբերական կազմակերպությունների նորարական գործունեության խթանման լծակները և առաջադրվել են արդյունաբերական կազմակերպություններում սոցիալական կայունության ամրապնդման համար անհրաժեշտ մեխանիզմներ և մոտեցումներ:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից

հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ ***հիմնավորվածություն և հավաստիություն:***

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ մշակվել են «պետություն-մասնավոր հատված» գործընկերության բարելավմանը, Հայաստանի արդյունաբերական կազմակերպությունների տնտեսական կայունության բարձրացմանը, կազմակերպությունների կայունության ապահովման գործում սոցիալական գործոնի ամրապանդմանն ուղղված մոտեցումներ և առաջարկություններ, որոնք կնպաստեն կազմակերպություններում արտադրողականության բարձրացմանը, գործարար ակտիվության խթանմանը, նորամուծությունների առաջադրմանը և ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել արդյունաբերական կազմակերպության կայունության հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության ***գիտագործնական նշանակությունը*** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում արդյունաբերական կազմակերպությունների կայունությանն ուղղված ծրագրերի իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսությունում իրականացված վերլուծությունների արդյունքում հեղինակն առաջարկում է արդյունաբերության զարգացմանը խրախուսելու

նպատակով տրամադրել վարկային և հարկային արտոնություններ: Կարծում ենք, նշված առաջարկությունների իրատեսականությունը գնահատելու համար հեղինակը պետք է ներկայացներ նշված արտոնությունների ֆինանսական բեռը պետական բյուջեի համար, ինչպես նաև դրանցից ակնկալվող օգուտները:

2. Արդյունաբերության ոլորտի զարգացման նպատակով աշխատանքում առաջարկվում է իրականացնել ՀՀ տնտեսության մեջ արտադրվող հիմնական արտադրատեսակների, ինչպես նաև տարբեր ոլորտներում մատուցվող ծառայությունների մրցունակության գնահատում: Ցանկալի կլիներ, եթե հեղինակը ներկայացներ նաև նման գնահատման հիմնական չափանիշները և հիմնավորեր դրանց ընտրությունը:

3. Արդյունաբերության զարգացման նպատակով պետություն-մասնավոր հատված գործընկերության շրջանակներում հեղինակի կողմից առաջարկվող որոշ մոտեցումներ բավականաչափ ընդհանրական են՝ մասնավորապես, պետական աջակցության մասով: Աշխատանքի գիտագործնական նշանակությունը զգալիորեն կբարձրանար, եթե առավել հանգամանալից կերպով ներկայացվեին նաև դրանց գործնական կիրառման մեխանիզմները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում արդյունաբերական կազմակերպությունների կայունության ապահովման հիմնախնդիրների լուծմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Աղաջանյանի թեկնածուական ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել կազմակերպությունների կայունության ապահովման խնդիրների լուծման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Աղաջանյանի <<Արդյունաբերական կազմակերպությունների կայունության հիմնախնդիրները Հայաստանում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**
20.06.2022թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. Գ. Թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Մ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

20.06.2022թ.